ղից 1606 թուին, Շահ-Աբբասի ձեռքով. նրանք բարձրահասակ են, քաջ և կրօնասէր. պարապում են գլխաւորապէս հողագործութեամբ, խաշնարածութեամբ և մասամբ էլ այգեմշակութեամբ. կան նաև փոքր թուով կօշկակարներ, խանութպաններ, բրուտներ և այլն։

Գիւղն ամբողջ հօթը դօնգ է, որի հինգ մասը սեփական է և երկուսը դպրոցապատկան (Նոր—Ջուղայի Ս. Ամենափրկչ. Հոգևոր գիշերօթիկ դպրոցին է պատկանում)։ Գիւղացիներից միայն 65 տուն հող ունեն, իսկ մնացեալները հողազուրկ են. նրանք մշակում են դպրոցապատկան հողերը և ստացած բերքից 43 խալվար ցորեն և 13 խալվար գարի տալիս են դպրոցին, իսկ պետական հարկ վճարում են 400 թուման։

Այժմ գիւղն ունի 170 տուն 1170 շնչով, որի 580-ը արական է և 590-ը իգական։ Բաղկացած է գիւղն երեք թաղերից — Գիւղ, Ղալէ և Նոր-ղալէ։ Գիւղն ունի մի եկեղեցի Ս. Յովհաննէս անունով, որի բակում է գտնուում դրպրոցը, որտեղ յաճախում են ձմեռը 60-ից աւելի երկսեռ աշակերտներ. երկրագործական զբաղմունքների պատճառով՝ սովորաբար գարունքից սկսում է թիւը քչանալ։ Այս տարի դպրոցում դասաւանդում էին մի ուսուցիչ և մի վարժուհի (օր. Վարդուհի Աւետիքեան, որ նշանակուած է Նոր - Ջուղայի Գիւղական Յանձնախմբի Վարչութիւնից)։ Նոր-Ղալէն ունի Ս. Ներսէս եկեղեցին և մի դպրոց, իսկ Ղալէյում գտնուում է Ս. Աստուածածին եկեղեցին. սա գիւղի ամենագեղեցիկ եկեղեցին է, որի սեղանի քարի առաջը պատկերացրուում է Յիսուսի 12 աշակերտները, Ս. Աստուածածինը, Յիսուսի խաչելութիւնը, դրախտը և Ադամ ու Եւան պարտիզում։ Եկեղեցու սեղանին կից գտնուող երկու սիւների վրայ կայ փորագրութիւն, որն առաջ եմ բերում, որովհետև պատկանում է եկեղեցու շինութեանը.

Ա. կառուցաւ այս սբ. եկեղեցին հրամանաւ Եսայի եպիսկոպոսի եւ օծաւ Հոկտեմբերի 10. 1892։

Բ. Հիմնարկութիւն սբ Աստուածաց եկեղեցոյ Մարտի 10. 1892.